



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

16 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Դ. Խաչատուրյանի
Անդամակցությամբ՝ Հ. Թովմասյանի
Ա. Վաղարշյանի

Քննության առնելով Ալեքսանդր Սահակյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Առնոլդ Վարդանյանի՝ անհատական դիմումը վերադարձնելու դեմ ներկայացրած բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. 2024 թվականի հոկտեմբերի 15-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Ալեքսանդր Սահակյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Առնոլդ Վարդանյանի (այսուհետ նաև՝ Դիմող) բողոքը, որով Դիմողը խնդրել է.

«(...) հիմք ընդունելով վերոգրյալը, և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի

հիմքով, խնդրում եմ սույն բողոքի հիմնավորումների հաշվառմամբ դիմումը համարել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված և Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով ընդունել նախնական ուսումնասիրության՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի»:

2. Ներկայացված բողոքի նախապատմությունը հետևյալն է.

2024 թվականի սեպտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Ալեքսանդր Սահակյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Առնոլդ Վարդանյանի դիմումը: 2024 թվականի հոկտեմբերի 1-ին Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի՝ թիվ Ա/0773-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ Գրություն) դիմումը վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ Դիմողը չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված պահանջը, այն է՝ Դիմողի կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել օտար լեզվով փաստաթուղթ՝ Դիմողի՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացու անձնագրի պատճենը՝ հայերեն թարգմանված՝ առանց օրենքով սահմանված կարգով կատարված նոտարական վավերացման:

Դիմողի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 4-ին Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարին ուղղվել է գրություն, որում ներկայացվել են առերևույթ հիմնավորումներ առ այն, որ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին տրվել է չափազանց ձևականացված մեկնաբանություն՝ հանգեցնելով դատական մատչելիության իրավունքի չափորոշիչների խախտման՝ նկատի ունենալով, որ դիմումին ներկայացված պահանջը բովանդակային առումով կատարված է. Սահմանադրական դատարան է ներկայացվել Դիմողի արտասահմանյան անձնագրի հայերեն թարգմանությունը, որը թարգմանվել է համա-

պատասխան որակավորում ունեցող թարգմանչի կողմից և հաստատվել նրա կնիքով:

Ըստ Դիմողի՝ նույն անձնագրով Դիմողը մասնակցել և մասնակցում է Հայաստանի Հանրապետության բոլոր դատական ատյաններում քննվող գործերով, իսկ անձնագրի նոտարական վավերացումը ներկայումս օբյեկտիվորեն չի կարող կատարվել այն պատճառաբանությամբ, որ Դիմողը բացակայում է Հայաստանի Հանրապետությունից:

Ի պատասխան Դիմողի նշյալ գրության՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ Ա/0812-2024 գրությամբ դիմումը՝ կից փաստաթղթերով, կրկին վերադարձվել է՝ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին չհամապատասխանեցվելու հիմնավորմամբ:

3. Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) և Սահմանադրական դատարանի դատական ակտեր՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին տրվել է չափազանց ձևականացված մեկնաբանություն, որը հակասում է դատական մատչելիության իրավունքի և վարույթի արդարացիության ապահովման չափանիշներին:

Ըստ Դիմողի՝ սույն բողոքը մերժելու և սահմանադրականության ստուգման վերաբերյալ ներկայացված դիմումը նախնական բովանդակային ուսումնասիրության չենթարկելու դեպքում Սահմանադրական դատարանի մատչելիության՝ Դիմողի իրավունքի խախտումը կդառնա անդառնալի:

Դիմողը մատնանշում է, որ իր բրիտանական անձնագրի բնօրինակը թարգմանվել և կնիքով վավերացվել է համապատասխան որակավորում ունեցող թարգմանչի կողմից և ներկայացվել Սահմանադրական դատարան՝ պնդելով նաև, որ Միացյալ Թագավորությունում գտնվելու պատճառով իր անձնագրի հայերեն թարգմանությունը Հայաստանի Հանրապետությունում նոտարի կողմից վավերացվել օբյեկտիվորեն չի կարող, և նույն անձնագրով ինքը մասնակցել և

մասնակցում է Հայաստանի Հանրապետության բոլոր դատական ատյաններում քննվող գործերով:

Վերոնշյալի հաշվառմամբ Դիմողը գտնում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը բովանդակային իմաստով կատարվել է, որպիսի պայմաններում իրեն նոտարական վավերացման լրացուցիչ պահանջ ներկայացնելն արդարացված համարվել չի կարող:

4. Ուսումնասիրելով բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

4.1. Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ **ապահովելով Սահմանադրության գերակայությունը**:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին **օրենքով սահմանված կարգով** որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Դիմողի կողմից մատնանշված՝ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Գրությամբ չափազանց ձևականացված մեկնաբանության վերաբերյալ պնդումը հիմնազուրկ է, քանզի սահմանադրական դատավարության քննարկվող փուլում դիմումի՝ որևէ ծավալով բովանդակային քննություն չի իրականացվում, այլ քննարկվում է նման քննությունը հնարավոր դարձնող՝ Օրենքով սահմանված պահանջների պահպանվածության հարցը, որոնք օրենսդրի կողմից կարգավորված են ամբողջ ծավալով և հստակ (*expressis verbis*):

4.2. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջի՝ օտարալեզու փաստաթղթի հայերեն թարգմանության՝ օրենքով սահմանված կարգով վավերացման նորմատիվ բովանդակությունը բացահայտելու նպատակով Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում նախ անդրադառնալ «վավերացում» եզրույթի լեզվական (էթիմոլոգիական) իմաստին:

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» համաձայն՝ «վավերացնել» բառը նշանակում է պաշտոնապես հաստատել, վավերական դարձնել որևէ փաստաթուղթ, որևէ բանի ճշտությունը հավաստել, ճիշտ համարել:

Ըստ այդմ՝ վավերացումը ենթադրում է որևէ սուբյեկտի կողմից կատարված գործողության (փաստաթղթի, ակտի) հավաստիության, ճշգրտության պաշտոնական հաստատում այլ (իրավասու) սուբյեկտի կողմից:

Դիմողի կողմից վիճարկվող Գրությամբ որպես դիմումի ձևական (ֆորմալ) թերություն մատնանշվել է Դիմողի՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացու անձնագրի պատճենի հայերեն թարգմանությունը՝ առանց պատշաճ, այն է՝ **օրենքով սահմանված կարգով** կատարված նոտարական վավերացման՝ դիմումին կից փաստաթղթերի ցանկում Սահմանադրական դատարան ներկայացնելը:

Հաշվի առնելով «վավերացում» եզրույթի վերոնշյալ բովանդակային իմաստը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նոտարի իրավական կարգավիճակի բովանդակությանը:

«Նոտարիատի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ ՆՕ) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարն **արդարադատության իրականացմանը նպաստող** հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է սույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր **վավերացնելու** կամ վավերացված

փաստաթղթեր տրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով:

Նշյալ օրինադրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ նոտարի իրավական կարգավիճակի առանցքն արդարադատությանը նպաստելն է, որն իրականացվում է նոտարական գործողությունների իրականացման և նոտարական ծառայությունների մատուցման և, մասնավորապես, փաստաթղթեր վավերացնելու միջոցով:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ նոտարը դատավարական նշանակության փաստաթղթերի վավերացմամբ, այն է՝ դրանց հավաստիության, իսկության հաստատմամբ նպաստում է պատշաճ և արդյունավետ արդարադատության իրականացմանը դատավարության բոլոր տեսակներում՝ այդ թվում՝ սահմանադրական դատավարությունում:

ՆՕ 36-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողություն[ը]՝ վավերացնում է փաստաթղթերի թարգմանության իսկությունը:

ՆՕ 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարը, վավերացնելով թարգմանության իսկությունը, չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ փաստաթղթի **թարգմանության բովանդակությունը համապատասխանում է** դրա **բնօրինակի** բովանդակությանը:

Վերը մեջբերված օրինադրույթների հիման վրա՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հանգում է այն հետևության, որ նոտարը, վավերացնելով փաստաթղթի թարգմանության իսկությունը, «Նոտարիատի մասին» օրենքով իրեն վերապահված բացառիկ կարգավիճակի ուժով հավաստիության կանխավարկաձային (presumptive) իրավաբանական ուժ է տալիս թարգմանչի կողմից օտարալեզու փաստաթղթի բնօրինակի հայերեն թարգմանությանը, որով տվյալ թարգմանությունը՝ որպես գրավոր փաստաթուղթ, ձեռք է բերում ապացուցողական նշանակություն:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում տարանջատել արտոնագրված թարգմանչի կողմից իր իսկ թարգմանությունը հաստատելու նպատակով թարգմանված տեքստի նյութական կրիչ հանդիսացող փաստաթուղթը կնքելու և այդ փաստաթղթի նոտարական վավերացման նպատակային նշանակությունն ու դրանից բխող իրավական հետևանքները:

Թարգմանչի արտոնագրված լինելը հավաստում է վերջինիս **մասնագիտական հմտությունները** տվյալ օտար լեզվից հայերեն թարգմանություն կատարելու վերաբերյալ, իսկ թարգմանությունը պարունակող փաստաթուղթը կնքելը հաստատում է թարգմանությունը տվյալ արտոնագրված թարգմանչի կողմից կատարված լինելը: Մինչդեռ թարգմանության նոտարական վավերացումը նպատակ ունի հավաստել, որ թարգմանության և բնօրինակ փաստաթղթի տեքստերի բովանդակությունը նույնական է, այսինքն՝ արտահայտում է միևնույն միտքը, պարունակում է միևնույն տեղեկույթը:

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ թարգմանության իսկության նոտարական վավերացման՝ վերը ներկայացված նպատակային նշանակությունն է թույլ տալիս օտարալեզու փաստաթղթին հաղորդել դատավարական-իրավական նշանակություն, որպիսի հանգամանքով պայմանավորված՝ Գրությամբ օտարալեզու փաստաթղթի հայերեն թարգմանության համար սահմանված վավերացման պահանջը մեկնաբանվել է որպես նոտարի կողմից վավերացված լինելու պահանջ:

Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ՆՕ համապատասխան իրավադրույթների վերոնշյալ համադրված վերլուծությամբ փաստվում է նոտարական գործողությունների միջոցով փաստաթղթերի վավերացման իրավական անայլընտրանքությունը, որից բացառությունները սահմանվում են միմիայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է նաև, որ Դիմողի կողմից որպես իր՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացու անձնագրի

պատճենի հայերեն թարգմանության իսկության նոտարական վավերացման ապահովման անհնարինության հիմնավորում ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու հանգամանքը հիմնազուրկ է նաև այն պատճառաբանությամբ, որ Դիմողը զրկված չէր Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկի միջոցով իր անձնագրի հայերեն թարգմանության իսկության վավերացման նոտարական գործողությունն ապահովելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 26-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Ալեքսանդր Սահակյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Առնոլդ Վարդանյանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված անհատական դիմումը վերադարձնելու դեմ ներկայացրած բողոքը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Դ. Խաչատուրյան

Հ. Թովմասյան

Ա. Վաղարշյան